

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### **ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՀԱՏԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆՏԻՐԸ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**Աղայան Նարինե**

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի կրտսեր զիտաշխատող*

Հարավային Կովկասի տարածաշրջանը գտնվում է Եվրասիական տարածքի կարևորագույն աշխարհագրական խաչմերուկներից մեկում, ուստի չի կարող դուրս մնալ համաշխարհային ուժի կենտրոնների ուշադրությունից: ԽՍՀՄ վիլուրումից հետո ձևավորված նոր իրավիճակում հարավկովկասյան հանրապետություններից յուրաքանչյուրն ընտրեց զարգացման իր տեսլականն ու կողմնորոշումը: Երեք տասնամյակ անց արդէն այս հանրապետությունները կանգնած են աշխարհաքաղաքական բռնորովին նոր զարգացումների առջև, երբ համաշխարհային քաղաքական համակարգը մտել է վոխակերպումների ուղեծիք և տրվել է նոր աշխարհակարգի ձևավորման մեկնարկը: Վրաստանը վաղուց արդէն ընտրել է Եվրախնտեզրման և Եվրատլանտյան դաշինքին միանալու ուղին և առաջ է շարժվում այդ ճանապարհով: Ադրբեյջանը ձևականորեն լինելով Չմիացման շարժման անդամ՝ սերտորեն ինտեզրվել է թյուրքական աշխարհի առաջնորդ Թուրքիայի Հանրապետությանը՝ խորացնելով ռազմական, քաղաքական, մշակութային վոխարարերությունները: Մինչդեռ Հայաստանը ավելի երկիմաստ վիճակում է:

Տարիներ շարունակ մեր հանրապետությունը փորձում էր հավասարակշռություն պահպանել Արևմուտքի և իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնության միջև: Թե որքանով դա հաջողվեց, ակներևաբար ցույց տվեցին վերջին տարիների իրադարձությունները, սկսած Արցախյան 44-օրյա պատերազմից, երբ մեր երկիրն ու Արցախը փաստացի ստիպված էին միայնակ դիմակայել Թուրքիայի, Խորայելի,

Պակիստանի, միջազգային վարձկան ահաբեկիչների<sup>1</sup> մասնակցությամբ և համակողմանի օժանդակությամբ պատերազմ սանձազերծած Աղրբեջանին, որն այնուհետև զավթեց նաև Հայաստանի ինքնիշխան տարածքից շուրջ 150 քառ. կմ:

Տեսնաբար, Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է սեփական տեղն ու դերը տարածաշրջանում և առհասարակ ձևավորվող նոր աշխարհակարգում ճշգրտելու, իմաստավորելու, իր սուբյեկտայնությունը վերականգնելու հրամայականի առջև: Հատկապես, որ ստեղծված ծանր իրադրությունում անհրաժեշտ են այնպիսի քայլեր ու գործողություններ, որոնք դրական զարգացումներ կբերեն արդեն իսկ գոյութենական խնդիրների առնչվող մեր պետությունում ու շրջափակված Արցախում:

Արձանագրենք, որ միջազգային աշխարհաքաղաքական մքնությունը ներկայում նպաստում է այն բանին, որ աշխարհի տարբեր ծայրերում, մանավանդ այնտեղ, որտեղ հասունացել է շահերի բախումը, փոխվեն ուժային հավասարակշռության գործող համակարգերը, որոնք միջպետական հարաբերություններում օբյեկտիվորեն հանգեցնում են լարվածության աճի, վերագնահատվեն դաշնակցային հարաբերությունները, քայլեր արվեն արտաքին քաղաքական նոր գործընկերներ գտնելու ուղղությամբ, հստակեցվեն նոր իրավիճակին համապատասխան արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:

Որո՞նք են մեր հանրապետության առաջնահերթ խնդիրները:

Նախ և առաջ, հարկավոր է կատարել, այսպես ասած, «գույքագրում», թե որպես պետություն ինչ ուսուրաներ ունենք ներքաղաքական, արտաքին քաղաքական, տնտեսական, ռազմական, անվտանգային և կենսականորեն կարևոր մնացյալ բոլոր ոլորտներում: Պետք է գնահատել մեր անցած ձանապարհը և հստակեցնել զարգացման մեր հնարավորությունները աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական առկա իրավիճակում՝ սահմանելով գործողությունների հստակ հաջորդականություն, որոնք բխում են մեր երկրի ռազմավարական ու մարտավարական առաջնահերթություններից, որոնց իրականացումը կամրապնդի առաջին հերթին պետության անվտանգությունը: Ուժային հավասարակշռության փոփոխված իրողությունների պայմաններում ՀՀ-ն ազգային շահերի ու ռազմական անվտանգության ապահովման նպատակով պետք է անվտանգային ռիսկերի համալիր գնահատ-

<sup>1</sup> См. Батлер Э. "Смерть была вокруг нас повсюду". Сирийские наемники вспоминают, как воевали в Карабахе, 11 декабря 2020, <https://www.bbc.com/russian/features-55277179>

ման մողել մշակի ու գործարկի, այսինքն՝ ձևավորի ազգային անվտանգության նոր հարացույց, որը հնարավորություն կտա, որ բարձր իրատեսականության ու չափելիության շրջանակում «շահեր - իրացման միջոցներ - սպառնալիքներ» շղթան արդյունավետ գործի:

Նկատենք, որ այսօրվա իրողությունները շատ նման են տարածաշրջանում մեկ դար առաջ ստեղծված իրավիճակին: Այսպես, ի տարբերություն հայ - Ռուսական հարաբերությունների, որոնք հետանկախության շրջանում հռչակվել էին որպես ռազմավարական դաշնակցային և հաստատագրվել բազմաթիվ միջպետական պայմանագրերով, անթարույց հաջող են զարգանում ոռու - թուրքական և ռուս - աղբբեջանական հարաբերությունները, ընդ որում՝ ոչ միայն տնտեսական ոլորտում: Ռուսաստանը, հայտնվելով արևմտյան և աշխարհի այլ երկրների կողմից իր նկատմամբ սահմանված պատժամիջոցների տակ, պայմանավորված ուկրաինական ճգնաժամով, վերանայեց իր հարաբերությունները բազմաթիվ պետությունների հետ: Ստեղծված իրավիճակից հմտորեն օգտվեցին Թուրքիան և Աղբբեջանը՝ առաջարկելով իրենց ծառայությունները, փոխարենը ստանալով պատասխան ծառայություններ (օրինակ դարաբաղյան հիմնախնդրի լուծման հարցում), ինչն արդի պայմաններում բխում է նաև Ռուսաստանի շահերից:

Այսպես, ակտիվացել է Թուրքիայի տարածքում գազային հանգույցի ստեղծման ուղղությամբ աշխատանքը, որը կարող է մեծ հնարավորություններ բացել այդ երկրի համար Եվրոպային ոչ միայն Ռուսաստանից, այլև Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի հանքավայրերից ստացվող էներգառեսուրսներով ապահովելու հարցում<sup>2</sup>: Միաժամանակ ընդլայնվել են թուրքական բիզնեսի հնարավորությունները ռուսական շուկան ինչպես թուրքական, այնպես էլ այլ երկրների արտադրության ապրանքներով հագեցնելու համար: Թուրքիան, ի հեճուկս Արևմուտքի և ՆԱՏՕ-ի իր գործընկերների դժգոհությունների և կշտամբանքների, շարունակում է ակտիվորեն համագործակցել Ռուսաստանի հետ, այդ թվում՝ փորձելով միջնորդի դեր ստանձնել ուկրաինական ճգնաժամը կարգավորելու հարցում: Դրա շնորհիվ այդ երկիրը նաև զգալիորեն ուժեղացրեց իր դիրքերը միջազգային ասպարեզում:

Մյուս կողմից՝ Ռուսաստանը, օգտվելով Աղբբեջանի և Եվրամիության միջև էներգակիրների մատակարարումները կրկնապատկելու վերաբերյալ պայմանագրեր կնքելու հանգամանքից, պայմանավորվեց

<sup>2</sup> См. Газовый хаб в Турции остается непоколебим – Коммерсантъ FM – Коммерсантъ – <https://www.kommersant.ru/doc/5811785>

Բարվի հետ, որ հեռանկարային ծավալների զգալի մասը կհամալրվի հենց ոռւսական ածխաջրածիններով<sup>3</sup>: Դրանից զատ՝ Աղրբեջանը, ինչպես որ Թուրքիան, սկսել է մեծ դեր խաղալ ապրանքների և ծառայությունների ոռւսական շուկայում:

Անկարենոր չէ հիշատակել, որ 2022 թ. փետրվարի 22-ին՝ Ուկրաինայի նկատմամբ ազրեսիայի նախօրեին, Ռուսաստանի և Աղրբեջանի դեկավարները բանակցությունների արդյունքում հայտարարեցին դաշնակցային փոխգործակցության հոչակագիր ստորագրելու մասին<sup>4</sup>: Շնորհիվ տարբեր ոլորտներում, այդ թվում՝ Մշակույթի, տնտեսության, ռազմաքաղաքական, երկարամյա համագործակցության՝ այս երկու պետությունները պաշտոնապես սկսեցին միմյանց անվանել «ռազմավարական գործընկերներ»: Պետք է նշել նաև, որ Ռուսաստանը տարիներ շարունակ Հայաստանի և Աղրբեջանի հետ փոխհարաբերություններում իրականացնում էր «հավասար հեռավորության» քաղաքականությունը, որը, ներկայումս, կարծես փոխվել է հօգուտ հարևան երկրի: Ռուս - աղրբեջանական նմանօրինակ մերձեցման հարցում փոքր դեր չունեն ինչպես Թուրքիան, այնպես էլ Ռուսաստանի հետ բարեկամ Միջին Ասիայի թյուրքական պետությունները, որոնց մի մասը ՀԱՊԿ ռազմաքաղաքական դաշինքի անդամ է, որին անդամակցում է նաև Հայաստանը<sup>5</sup>:

Արձանագրենք, որ ներկա պահին Ռուսաստանի տնտեսական կապերի ընդլայնումը Թուրքիայի և Աղրբեջանի հետ աննախադեպ է, որից շահում են բոլոր երեք կողմերը: Այս հանգամանքը չի կարող չաղդել պետությունների միջև տարածաշրջանային քաղաքական համագործակցության վրա, որը նախքան ուկրաինական իրադարձություններն էլ բավականին բարձր մակարդակի վրա էր: Այդուհանդերձ, Թուրքիան զուգահեռ շարունակում է իր ավանդական դիվանագիտությունը՝ խաղալով միաժամանակ մի քանի դաշտերում: Նա չի խորշում անզամ զարգացնել հարաբերություններն Ուկրաինայի հետ, որը Ռուսաստանի հետ ամենօրյա պատերազմի մեջ է՝ ճանաչելով Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը: Թուրքիան չի հրաժարվել նաև

<sup>3</sup> Տե՛ս EU and Azerbaijan seal strategic partnership agreement on energy security, <https://www.commonspace.eu/node/11502>

<sup>4</sup> Декларация о союзническом взаимодействии между Российской Федерации и Азербайджанской Республикой, <http://www.kremlin.ru/supplement/5777>

<sup>5</sup> Կազմակերպության ներկայումս անդամակցում են Հայաստանը, Բելառուսը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը:

իր ակնհայտ, թեկուզ դեռևս առկախված պանթուրքիստական ձգտում-ներից:

Թուրքական նոր կայսրություն ստեղծելու գաղափարախոսները առաջ են քաշում «Մեծ Թուրան» նախագիծը, որը Չինաստանից և Կենտրոնական Ասիայից մինչև Վոլգայի տարածաշրջանում ու Բալկաններում բնակեցված թյուրքական ժողովուրդների բոլոր հետնորդներին համարում են «մեկ ազգ» և նպատակ ունի ստեղծել հզոր թյուրքական միություն, որը միասնական մշակութով, արժեհամակարգով ու քաղաքական համերաշխուրժյամբ կդառնա համաշխարհային ուժի կենտրոն և գործոն<sup>6</sup>: Սա, բնականաբար, չի բխում Ռուսաստանի շահերից, ավելին խիստ հակասում է դրանց, քանի որ սպառնում է այդ երկրի տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը: Եվ այն պահին, եթե Ռուսաստանը ստիպված կլինի առերեսվել այս հարցերին, կրկին կզգա Հայաստանի որպես հարավկովկասյան տարածաշրջանում իր ամենահուսալի դաշնակցի կարիքը: Բայց և այնպես ներկայումը թուլացած ուսական պետությունը առաջնորդվում է այլ հաշվարկներով ու շահերով: Սակայն ստեղծված իրավիճակի վերաբերյալ հայկական կողմն ունի իր տեսակետներն ու վերլուծությունները և հետևողություն անելու նախարրյանները:

Այս համապատկերում, եթե Թուրքիան հետևողականորեն առաջ է մղում «Մեծ Թուրանի» իր տեղականը, ի՞նչ սպառնալիքներ ու վտանգներ են պատուհասում Հայաստանին: Նախ պետք է ընդգծենք, որ իր աշխարհագրական դիրքով Հայաստանն ասես թյուրքական աշխարհի ամենախոցելի տեղում միրճված սեպ է, որը բաժանում է թյուրքական աշխարհի առաջնորդ պետությանը մնացյալ թյուրքական աշխարհից: Պատահական չէ, որ արդեն մեկ դարից ավելի է, որ Օսմանյան կայսրությունն, ապա իր ներկայիս ժառանգորդ Թուրքիան ձգտում է վերացնել իր արևելյան ճանապարհին ընկած արգելապատնեշը: Սա է, որ գոյաբանական սպառնալիք է դառնում մեր երկրի համար: Մյուս կողմից հենց այս հանգամանքն է, որ Հայաստանին աշխարհաքաղաքական գործոն է դարձնում տարածաշրջանում:

Բանն այն է, որ Թուրքիայի առաջնադացումը դեպի Արևելք խոշնդրություն հարցում շահագրգիռ երկրների թիվը չի սահմանափակվում միայն Ռուսաստանով: Այս հարցում համընկնում են Հայաստանի

<sup>6</sup> Թուրքիան մտադիր է իրականացնել «Մեծ Թուրան» ծրագիրը, 12.02.2021, <https://www.lurer.am/hy/>

և ասիական մի շարք կարևոր երկրների շահերը, մասնավորապես՝ Ի-  
րանի, Հնդկաստանի և Չինաստանի: Նշված երկրներից որևէ մեկին  
ձեռնուու չէ Թուրքիայի հզորացումն ու ազգեցության ընդլայնումը:

Այսպես, Իրանը շահագրգռված է պահպանելու կայունությունը  
տարածաշրջանում՝ իր համար «կարմիր գիծ» համարելով սահմաննե-  
րի անփոփոխությունը՝ նկատի ունենալով Սյունիքում միջանցք ստա-  
նալու թուրք - ադրբեջանական նկրտումները<sup>7</sup>: Թուրքիայի, ինչպես  
նաև Ադրբեջանի և Իսրայելի զգալի ակտիվացման պայմաններում նը-  
ման փոփոխությունները, անշուշտ, բացասաբար կանդրադառնան  
նաև Իրանի հյուսիսային շրջանների վրա, որոնք հիմնականում բնա-  
կեցված են երնիկ ադրբեջանցիներով (տարբեր գնահատականներով՝  
20-30 մլն): Դրա հետ մեկտեղ՝ տարածաշրջանում ապակայունացումը  
կարող է հանգեցնել նաև Իրանի մյուս ժողովուրդների անջատողական  
տրամադրությունների ակտիվացմանը: Բացի այդ, Իրանը կարող է  
զրկվել դեպի Սև ծով դուրս եկող ցամաքային ճանապարհից՝ հայտնվե-  
լով մեկուսացման մեջ:

Չինաստանի դեպքում Կենտրոնական Ասիայի տարածաշրջա-  
նում թուրքական ազդեցության ուժեղացմանը զուգընթաց՝ իրավիճակը  
կիանզեցնի Չինաստանին տարածաշրջանից դուրս մղելու փորձերի: Այս  
ամենին պետք է հավելել Թուրքիայի կողմից ուժեղացող աջակցու-  
թյունը Չինաստանի հիմնականում թյուրքական տարրով բնակեցված  
Սինցյան - Ույղուրական ինքնակար շրջանում կենտրոնախուսու տրա-  
մադրությունների տարածմանը: Հասկանալի է, որ այդ գործոնները  
պետք է լրջորեն մտահոգեն չինական դիվանագիտությանը:

Հնդկաստանի պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ  
Եվրասիական տարածքում պանթուրքիզմի ակտիվացումը նրա հա-  
մար նշանակում է թշնամաբար տրամադրված հարևանի՝ Պակիստա-  
նի ուժեղացում: Բացի այդ, Հնդկաստանը, որ Իրանի հետ մշակում է  
Եվրոպային միացնող Հյուսիս - Հարավ ճանապարհային միջանցքի  
նախագիծը, ձգտում է, որ այն անցնի Հայաստանով և կախվածության  
մեջ չընկնի թուրքական դիրքորոշումներից:

Ուստի, վերոնշյալ աշխարհագործական իրողություններից ել-  
նելով՝ Հայաստանի նշանակությունը տարածաշրջանային գործընթաց-  
ներում կարող է զգալիորեն մեծանալ: Այս իմաստով հարկավոր է ձըշ-  
գրտել արտաքին քաղաքական վեկտորները, ստեղծել իրական գոր-

<sup>7</sup>Տե՛ս Զարքի Մ., Իրանի համար կարմիր գիծը Հայաստանի տարածքային ամբողջակա-  
նությունն է. 27.01.2021 <https://www.civilnet.am/news/>

ծընկերների բարեկամների ու դաշնակիցների շրջանակ և ծավալել ամենալայն բազմադրու համագործակցություն:

Արտաքին քաղաքական գործունեության հովժ կարևոր մյուս ուղղությունը արևմտյանն է: Ներկայումս ուկրաինական ճգնաժամի համապատկերում Արևմուտքի և Ռուսաստանի միջև խորացող դիմակայության պայմաններում ոչ հարթ հարաբերություններ են ձևավորվել նաև արևմտյան երկրների ու Թուրքիայի միջև: Վերջինս Արևմուտքի ընկալմամբ անկանխատեսելի և անվստահելի գործընկեր է: Բացի այդ, պետք է հաշվի առնենք, որ պանթուրքական մեծ նախագիծը չի կարող անտարեր թողնել նաև եվրոպական երկրներին, որոնց ժողովուրդների պատմական հիշողությունը դեռ թարմ է տարբեր ժամանակաշրջաններում Եվրոպայի նկատմամբ թուրքական հավակնությունների մասին: Նրանց անմիջական հարևանությամբ թյուրքական պետությունների հզոր միավորման ձևավորումը լուրջ սպառնալիք է ինչպես տնտեսական, ժողովրդագրական, այնպես էլ աշխարհաքաղաքական առումներով:

Ասվածից բխում է, որ թուրք - ադրբեջանական սպառնալիքին դիմակայելու հարցում Հայաստանը աշխատելու լայն հնարավորություններ ունի արևմտյան գործընկերների հետ: Պատմական անհրաժեշտություն է առաջացել Եվրամիության երկրների և առանձնապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունները վերաբեռնելու, որակապես փոփոխելու հարցերում: Ասվածը վերաբերում է ինչպես ժողովրդագլաւրական ինստիտուտների զարգացմանը, տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդմանը, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում փոխգործակցությանը, այնպես էլ ռազմական, պաշտպանական ոլորտում համագործակցությանը: Մասնավորապես ԱՄՆ-ի հետ սկիզբ դրված ռազմավարական երկխոսությունը մեծ ներուժ ունի վերածելու ռազմավարական գործընկերության:

Այսպիսով, ակնհայտ է, որ Հարավային Կովկասում խախտված ուժային հավասարակշռությունը դեռևս չի որոշակիացել, ուստի Հայաստանից պահանջվում է իրատեսություն ու հեռատեսություն ինքնիշխանությունից բխող իր ազգային շահերը սահմանելու, դրանց հետամուտ լինելու և դրանց ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսներ ու մեխանիզմներ ներդնելու հարցերում: Մեփական շահերը ձևակերպելիս պետք է դրանք համադրել այդ շահերին առավել համերաշխ պետությունների մոտեցումների հետ, ինչպես նաև պրազմատիզմ դրսերել գործընկերներ ու դաշնակիցներ ընտրելիս: Այս ամենը թույլ

տա մշակել ազգային անվտանգության նոր հարացույց ձևավորվող նոր աշխարհակարգի պայմաններում:

Արդի աշխարհում գլոբալ փոփոխությունների պայմաններում Հայաստանը պետք է իրատեսորեն գնահատի իր դերը տարածաշրջանային գործընթացներում, ինչպես նաև անսխալ ընտրի այն ուժի կենտրոնները, որոնք գործնականում շահագրգուված են իր ամրապնդմամբ՝ որպես տարածաշրջանում ակտիվ սուբյեկտ և գործոն:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում Հարավային Կովկասի տարածաշրջանում ստեղծված լարված իրավիճակում Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերներն ու խնդիրները: Նըշվում է, որ հանրապետությունը հայտնվել է սեփական տեղն ու դերը տարածաշրջանում և առհասարակ ձևավորվող նոր աշխարհակարգում ճշգրտելու, իմաստավորելու, իր սուբյեկտայնությունը վերականգնելու հրամայականի առջև: Այս առումով անհրաժեշտություն է առաջացել մշակելու և կիրառելու ազգային անվտանգության նոր հարացույց ձևավորվող նոր աշխարհակարգի պայմաններում:

Նշվում է, որ միջազգային աշխարհաքաղաքական քառոսում կարիք է առաջացել Վերազնահատելու դաշնակցային հարաբերությունները, քայլեր անելու արտաքին քաղաքական նոր գործընկերներ գտնելու ուղղությամբ, հատակեցնելու նոր իրավիճակին համապատասխան արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:

Հոդվածագիրը արձանագրում է, որ ներկայումս ՀՀ-ի առջև ծառացած ամենամեծ մարտահրավերը թուրք - ադրբեջանական սպառնալիքն է, որին դիմակայելու համար մեր երկրին հարկավոր են վստահելի դաշնակիցներ, որոնց հետ ունենք ընդհանուր շահեր:

**Բանապի բառեր.** ազգային անվտանգության հարացույց, հարավկովկասյան տարածաշրջան, թուրքական սպառնալիք, նոր աշխարհակարգ, ինքնիշխանություն, ուազմավարական գործընկերություն:

# ПРОБЛЕМА УТОЧНЕНИЯ ПАРАДИГМЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ НОВОГО МИРОПОРЯДКА

Агаян Нарине

*Младший научный сотрудник Института  
философии, социологии и права НАН РА*

## РЕЗЮМЕ

В статье рассматриваются вызовы и проблемы, с которыми столкнулась Республика Армения в напряженной ситуации, сложившейся в регионе Южного Кавказа. Отмечается, что республика встала перед требованием уточнения, осмысления собственного места и роли в регионе и в целом в формирующемся новом миропорядке, а также восстановления своей субъектности. В связи с этим возникает необходимость разработки и применения новой парадигмы национальной безопасности в условиях формирующегося нового миропорядка.

Отмечается, что в условиях международного геополитического хаоса возникла необходимость переоценки союзнических отношений, принятия мер по поиску новых внешнеполитических партнёров, уточнения внешнеполитических приоритетов в соответствии с новой ситуацией.

Автор статьи отмечает, что самым большим вызовом, сегодня вставшим перед РА, является турецко-азербайджанская угроза, для противостояния которой нашей стране нужны надежные союзники, с которыми у нас есть общие интересы.

**Ключевые слова:** парадигма национальной безопасности, регион Южного Кавказа, турецкая угроза, новый мировой порядок, суверенитет, стратегическое партнерство.

# THE PROBLEM OF CLARIFICATION OF THE NATIONAL SECURITY PARADIGM IN THE PROCESS OF FORMING A NEW WORLD ORDER

Aghayan Narine

*Junior Researcher of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA*

## SUMMARY

The article examines the challenges and problems faced by the Republic of Armenia in the tense situation that has developed in the South Caucasus region. It is noted that the republic is faced with the task of clarifying and understanding its own place and role in the region and in general in the emerging new world order, as well as restoring its subjectivity. It is noted that in the conditions of international geopolitical chaos, there has been a need to reassess allied relations, take measures to find new foreign policy partners and clarify foreign policy priorities in accordance with the new situation.

The author of the article notes that the biggest challenge facing the Republic of Armenia today is the Turkish-Azerbaijani threat, to counter which our country needs reliable allies with whom we have common interests.

**Keywords:** national security paradigm, South Caucasus region, Turkish threat, new world order, sovereignty, strategic partnership.